ՊԵՏՍՊԱՍԱՐԿՈՒՄ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՏՈՒՆԸ ՓՈԽՈՒՄ Է ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԱՐԳԸ

Սոցիալական ծառայության գործակալություն
Ոստիկանության նախարարություն

Համավարակի պայմաններում, երկրում կորոնավիրուսի տարածումը կանխելու նպատակով Վրաստանի ողջ տարածքում Արդարադատության տներն ու հասարակական կենտրոններն անցնում են նախնական գրանցման սկզբունքի աշխատակարգի:

Նոյեմբերի 30-ից Վրաստանի արդարադատության տներն ու հասարակական կենտրոններն անցնում են աշխատանքի նոր ժամանակակարգի: Գերատեսչության հաղորդագրության համաձայն, վերոնշյալ հաստատությունները կաշխատեն երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը 09:00-18:00-ը (մինչ այդ Թբիլիսիում եւ Բաթումիում այդ հաստատություններն աշխատում էին մինչեւ ժամը 21:00-ն):

Ներկա դրությամբ, Արդարադատության տան սպասարկումների մեծամասնությունը քաղաքացիներին մատչելի էր հեռավար, թեպետ, եթե քաղաքացուն անհրաժեշտ է ծառայություն, որի ստացման համար անհրաժեշտ է անձնական ներկայությունը (օրինակ, էլեկտրոնային անձնական վկայականի կամ կենսաչափական անձնագրի ստացումը), ապա նա կարող է նախնական գրանցմամբ այցելել Արդարադատության տուն կամ հասարակական կենտրոն: Արտակարգ սպասարկումները, օրինակ՝ մահվան վկայականի ստացումը, քաղաքացիները կարող են ստանալ աշխատանքային օրերին, առանց նախնական գրանցման, իսկ շաբաթ-կիրակի օրերին՝ միայն էլեկտրոնային տեսքով:

Ինչ վերաբերում է ծննդյան վկայականի ստացմանը, ապա սպասարկումն իրականացվում է միայն աշխատանքային օրերին, այցի նախնական գրանցումով, իսկ շաբաթ-կիրակի օրերին՝ միայն էլեկտրոնային տեսքով:

25 ԼԱՐԻԻ ՎԱՈՒՉԵՐ՝ ՆՈՐԱԾԻՆՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻՆ

Վրաստանի արդարադատության նախարարության հայտարարությամբ, դեկտեմբերի 15-ից նորածինների ծնողներին, որոնք արդարադատության նախարարությանը կդիմեն երեխայի ծնունդի գրանցման համար, կփոխանցվեն հատուկ նվեր՝ 25 լարիի վաուչեր:

Գերատեսչության տեղեկատվությամբ, նորածինների ծնողները կստանան նաեւ զեղչման քարտեր մանկական սննդի եւ խնամքի միջոցների ձեռքբերման համար:

Արդարադատության նախարարության պարզաբանմամբ, «Բարի գալուստ» նախագիծը նորածինների ծնողներին առաջարկում է երկու տարբեր փաթեթներ: Սոցիալապես կարիքավոր ընտանիքներից նորածինների ծնողները, ծննդյան վկայականի հետ միասին, նորածինի հագուստի եւ հիգիենայի միջոցների հետ միասին, ստանում է 25 լարիի վաուչեր մանկական սննդի եւ խնամքի միջոցների ձեռքբերման համար, իսկ մանկական տակդիրների, սննդի եւ խնամքի միջոցների վրա մեկ տարվա ընթացքում կօգտվեն 30-40 տոկոս զեղչից: Միեւնույն ժամանակ, շահառուները, տարբեր արտադրողներից ապրանքներ գնելիս, կկարողանան օգտվել միանվագ 50 տոկոս զեղչի քարտից:

Նշենք, որ նախագիծը կունենա համակարգված տեսք, քանի որ արդարադատության նախարարի որոշմամբ, արդարադատության տունը մշտական պարտավորություն է ստանձնել սոցիալապես անապահով նորածիններին նվերներ մատուցել:

ՆԳՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆՈՒՄ Է ԱՌԱՆՁԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԸ

Ելնելով միջգերատեսչական համակարգող խորհրդի հանձնարարականներից՝ ներքին գործերի նախարարության սպասարկումների գործակալությունը դադարեցնում է առանձին ծառայությունների մատակարարումը եւ անցնում այլ աշխատակարգի:

Նոր կարգի համաձայն, քաղաքացիները ժամանակավորապես չեն կարողանա հանձնել վարորդական վկայականի գործնական եւ տեսական քննությունները, բացառությամբ նրանց, ովքեր նախօրոք ամրագրել են տեսական քննության հանձնման օրը կամ տեսականն արդեն հանձնել են, մնացել է միայն գործնական քննությունը: Նրանք այն կարող են հանձնել ցանկացած աշխատանքային օր: Բացառություն են կազմում նաեւ վարորդական վկայականը վերականգնել ցանկողները:

Դադարեցված է նաեւ հրազենի ձեւակերպման, տրանսպորտային միջոցների տեխստուգման ընթացակարգերը:

Ժամանակավորապես կանգնեցվում է Ախալքալաքիի եւ Ամբրոլաուրիի հասարակական կենտրոնների գործունեությունը:

Ինչ վերաբերում է ՆԳՆ-ից տեղեկանքների ստացմանը, ապա դրանք կարելի է ստանալ միայն էլեկտրոնային տեսքով գործակալության կայք էջով (sa.gov.ge):

ՈՒՍԱՆՈՂՈՒՀՈՒ ԱՌԱՋԻՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ

ՈՐԵՎԷ ԼԵԶՎԻՆ ՏԻՐԱՊԵՏԵԼԸ ՍՈՍԿ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆ Է, ԻՍԿ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԻՆԸ՝ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

2020 թվականը ուսանող կոչվելու երջանկությանն արժանացրեց Վրաստանի հազարավոր երիտասարդների: Սեպտեմբերին ուսանողական լսարաններ մտնողների շարքերում հայտնվեցին նաեւ մի քանի հարյուր մեր երկրի ազգությամբ հայ տղաներ ու աղջիկներ, որոնց գերակշիռ հատվածն ընդունվեց՝ Վրաստանի ազգային փոքրամասնություններին առանձնակի աջակցությամբ բուհերում ուսանելու հնարավորություն ընձեռող, 2010 թվականից սահմանված պետական «1+4» ծրագրի շրջանակներում:

Մարիամ Բաղալյանը, ի տարբերություն նրանց, իր երազած բուհն ընդունվել է ոչ այդ ծրագրով...

Մարիամն ավարտել է Թբիլիսիի «Ib Mthiebi» դպրոց պանսիոնը (տնօրեն՝ Նինո Չիկվաիձե):

- Դասարանում միակ հայն էի, բայց ինձ երբեք զգացնել չտվեցին այլազգի լինելս,- պատմում է նա,- սովորեցի, ինչպես ասում են, հավասար պայմաններում: Դասերին պատրաստվում էի բարեխղճորեն՝ ջանալով ոչ մեկից ետ չմնալ եւ իմ վրացի դասընկերներից չտարբերվել պակաս առաջադիմությամբ: Դա ինձ հաջողվում էր. ի դեպ, բուհի ընդունելության քննություններին ինձ ընդամենը կես փուլ պակասեց՝ գրանտ ստանալու համար: Եվ ահա, Թբիլիսիի պետական բժշկական համալսարանի ուսանող եմ:

Իբրեւ վրացական դպրոցի շրջանավարտ՝ ես, բնականաբար, միանգամից նստեցի համալսարանի իմ նախընտրած՝ հասարակական առողջապահության ֆակուլտետի առաջին կուրս՝ առանց վրաց լեզվի նախապատրաստական զրո կուրսում մեկ ավելորդ տարի սովորելու, ինչպես դա արվում է «1+4»-ով ընդունվածների դեպքում:

Անսահման երջանիկ եմ. իրականություն է դարձել դպրոցական տարիներից ինձ թեւավորող երազանքս՝ լինել բժշկության ոլորտում ու ուժերիս ներածին չափ օգնել մարդկանց իրենց կյանքի այնպիսի գերկարեւոր հարցում, ինչպիսին է առողջության ձեռքբերման ու պահպանման խնդիրը: Կարծում եմ՝ համաճարակաբանի մասնագիտությամբ, որն ընտրել եմ, եւ որը զբաղվում է համաճարակների դեմ պայքարի միջոցների մշակմամբ, առավելագույնս կկարողանամ մեր հասարակությանը փոքր-ինչ գոնե օգնել կյանքի որակը լավացնելու միտումներում: Չէ՞ որ մեզանից յուրաքանչյուրի լիարժեք կյանքի գլխավոր ու ամենաանհրաժեշտ պայմանն առողջությունն է, ինչը ապահովելու համար էլ կոչված է բժշկությունը:

Ինչ վերաբերում է այս տարվա արտասովոր ուսումնառության ընթացքին, ապա չնայած կորոնավիրուսի համավարակին, որ այսօր իր պայմաններն է թելադրում, եւ երկրում ուսումնառությունն ընթանում է հեռավար մեթոդով, բայց մենք՝ կուրսեցիներս, նույնիսկ այդ պայմաններում հասցրել ենք ծանոթանալ ու մտերմանալ միմյանց, այժմ էլ պատրաստվում ենք կիսամյակի քննություններին: Ի դեպ, համալսարանում ինձանից բացի, ուրիշ հայ ուսանողներ էլ կան «1+4» ծրագրով Թբիլիսիից, Սամցխե-Ջավախեթիից, Քվեմո Քարթլիից: Նրանք էլ վրացերենի իմացության հետ կապված արդեն խնդիրներ չունեն: Ասեմ նաեւ, որ չնայած վրացական կրթությանս՝ ես տիրապետում եմ նաեւ իմ մայրենի լեզվին: Հայերեն գրել-կարդալ ինքնուրույն սովորեցի, առանց որեւէ դժվարության, ընդամենը մեկ ամսում: Դա իրականում ցանկության հարց է:

Ինչպես իմաստուններից մեկն է ասել՝ որեւէ լեզվին տիրապետելը ցանկություն է, իսկ պետական լեզվինը՝ անհրաժեշտություն: Դրանում ես համոզվեցի իմ հայազգի համակուրսեցիների օրինակով, որոնք ամեն ինչ անում են, որ բացի մասնագիտականից, գերազանց տիրապետեն նաեւ պետական լեզվին:

Հայոց լեզվին վարժվելու համար հաճախ կարդում եմ նաեւ «Վրաստան» թերթը եւ հուսով եմ, որ շուտով առավել ազատ ու վարժ կտիրապետեմ հայերենին: Ինչպես ասում են՝ ամեն ինչ դեռ առջեւում է...

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ՆՈՐՈՒՅԹ

TBC-Ի ԴՈՒՐՍԳՐՄԱՆ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՄՈԴԵԼԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վերջերս TBC բանկը՝ առաջինը Վրաստանում անցավ բանկային սեպասարկումների եւ ծառայությունների դուրսգրման նորարարական բիզնես-մոդելի: Նորույթը բանկը հարմարեցրեց սպառողների անհատական պահանջներին եւ այդ նպատակով ձեւավորեց երեք տարբեր տեսակի՝ 2L, 5L եւ 10L հավաքածուներ:

«Բանկ դուրսգրմամբ» բիզնես-մոդելի շրջանակներում սպառողները կոմիսիոն վճարումը իրականացնում են ամսական մեկ անգամ եւ իրենց համար ցանկալի բանկային սպասարկումներն ու ծառայությունները միասնական հավաքածուի տեսքով ստանում են առավել դյուրացված կարգով եւ քիչ ծախսերով: Հավաքածուի դուրսգրման հետ միասին սպառողին վերապահվում է ըստ ցանկության եւ ճաշակի նորացված դիզայնով, գունավոր քարտերից երկուսի ընտրության հնարավորությունը:

Դուրսգրման անհատական մոդելը եւ գունավոր քարտերը հենց սկզբից գրավեցին սպառողների ուշադրությունը: Նորույթը հետաքրքրություն առաջացրեց տարբեր ոլորտներով շահագրգռված անձանց մոտ, ովքեր ելնելով ամենօրյա պահանջներից ընտրեցին ցանկալի հավաքածուներն ու անհատական քարտերը:

Նիկա Լեբանիձե.- ճանապարհորդ

- Ճանապարհորդել եմ գրեթե բոլոր մայրցամաքներով: Տարբեր երկրներում գտնվելու ժամանակ օգտվել եմ պլաստիկ քարտից, թեպետ, ելնելով արտակարգ իրավիճակներից, քարտը հաճախ կորցրել եմ, կամ այն վնասվել է: TBC-ի սպասարկումների հավաքածուի դուրսգրմամբ, որպես նվեր ստացա երկրորդ քարտը, ինչը կապահովագրի վերոնշյալ իրավիճակներից: Գերադասեցի կարմիր եւ կապույտ քարտերը՝ կարմիրը հիշեցնում է մայրամուտը, իսկ երկնագույնը՝ օվկիանոսում արեւածագը:

https://www.facebook.com/tbcbank/videos/1082553672200736/

Իա Չագանիա.- խոհարար

- Խոհարարությունն անընդմեջ զարգանում է, հետեւաբար, պետք է անընդհատ հետեւել նորություններին: Գրանցվել եմ տարբեր կայք-էջերում, որտեղ ծանոթանում եմ նորույթներին, որի համար կոնկրետ գումար եմ վճարում: Ուրախ եմ, որ դուրսգրման մոդելն արդեն մատչելի է նաեւ Վրաստանի բանկային հատվածում: Դուրս եմ գրել 5 լարիանոց հավաքածու, ինչի մեջ միավորված է ինձ հետաքրքրող շատ սպասարկում եւ ծառայություն: Այդ ուղիով բանկային սպասարկումներից օգտվելը շատ արդյունավետ է եւ ոչ ծախսատար, քան դրանցից առանձին-առանձին օգտվելը: Հավաքածուն ներառում է նաեւ քարտի ապահովագրությունը, քանի հաճախ եմ կորցնում իրերը եւ ապահովագրությունը ինձ համար նշանակալից է:

https://www.facebook.com/tbcbank/videos/3586228938103236/

Տբել Աբուսերիձե.- լուսանկարիչ

- Հաճախ եմ օնլայն օգտվում տարբեր սպասարկումներից եւ ծառայություններից: Օրինակ, ամեն ամիս գումար է վճարում նրա համար, որ կինոնկարների ու սերիալների հարթակում դիտեմ ինձ համար ցանկալի ֆիլմը: Ուրախ եմ, որ Վրաստանում արդեն հնարավոր է, ամսական մեկ անգամ վճարելով, դուրս գրել նաեւ բանկային սպասարկումը: Ինչ վերաբերում է քարտին, ապա ընտրեցի սեւն ու կապույտը: Հավաքածուն պատվիրեցի օնլայն եւ այն ցրիչը, ինձ հասցրեց անվճար:

https://www.facebook.com/tbcbank/videos/861235281312236/

TBC բանկի սպասարկումների ցանկալի հավաքածուի, ինչպես նաեւ նորացված դիզայնով գունավոր քարտերի դուրսգրումը հնարավոր է www.tbccard.ge կայքով: TBC բանկի քարտերը ողջ Վրաստանի տարածքով տրվում է անվճար:

COVID - 19

«ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԼԻԱՐԺԵՔ ԿՅԱՆՔ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՆ Է»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

- Մենք հայտարարել ենք երկամսյա ծրագրի մասին, որը պետք է կայունացնի երկրում համաճարակային իրավիճակը: Մենք հայտարարում ենք ինտենսիվ թեստավորման նոր ժամանակացույց, որը շուտով կհասնի օրական 20 հազար թեստի: Սա զուգահեռ գործընթաց է, որը պետք է նպաստի սահմանափակումների շրջանում վարակի արագ հայտնաբերմանը: Այս քայլի նպատակն է սահմանափակումների երկամսյա ծրագիրը հնարավորինս արդյունավետ դարձնել, հնարավորինս շուտ հայտնաբերել վարակման դեպքերը, բուժել դրանք, որպեսզի փետրվարի սկզբին կյանքը լիարժեք շարունակելու հնարավորություն ունենանք,- հայտարարեց Գիորգի Գախարիան:

Վարչապետի խոսքով, խումբ է ստեղծվել պատվաստումների պլանի մասին հոգալու, այն գնելու համար:

- Մենք արդեն որոշակի գումար ենք վճարել պատվաստանյութի ժամանակին ներկրման համար: Այս հանձնաժողովը պետք է ապահովի պատվաստանյութի ժամանակին ներկրումը, ինչպես նաեւ տեխնիկական նախապատրաստական աշխատանքները, որոնք անհրաժեշտ են պատվաստումները ժամանակին սկսելու համար,- նշեց Գիորգի Գախարիան:

ԻՆՏԵՆՍԻՎ ԹԵՍՏԱՎՈՐՈՒՄ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԻՆ

- Քաղաքացիները հնարավորություն կունենան արագ թեստ հանձնել պետության հաշվին, ամեն օր կանցկացվի մոտ 20 հազար թեստավորում,- դեկտեմբերի 2-ին կառավարության նիստում հայտարարեց Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան եւ հավելեց, որ այս երկու ամիսների ընթացքում ինտենսիվ թեստավորման գործընթացի նպատակը հնարավորինս արդյունավետ դարձնելն է սահմանափակումների երկամսյա ծրագիրը՝ հնարավորինս արագ հայտնաբերելու, մեկուսացնելու եւ բուժելու վարակակիրներին:

Իր հերթին, Վրաստանի առողջապահության նախարար էկատերինե Տիկարիձեն նշեց, որ ինտենսիվ թեստավորումը ոչ միայն Վրաստանի փորձն է, այլ դրան դիմում են աշխարհի շատ երկրներ:

Առողջապահության նախարարի խոսքով, կօգտագործվեն արագ թեստերը, ինչպես նաեւ «Փի Սի Ար» թեստերը:

- Ինտենսիվ թեստավորումը ոչ միայն Վրաստանի փորձում է, աշխարհի բազմաթիվ երկրներ արգելափակման ժամանակահատվածում դիմում են նպատակային եւ արդյունավետ փորձարկման, որպեսզի բոլոր դեպքերը հայտնաբերվեն ժամանակին: Դա կօգնի մեկուսացնել վարակվածներին, ուստի կնվազի վարակի տարածումը: Դա է նպատակը: Ներգրավված կլինեն ինչպես արագ թեստերը, այնպես էլ՝ «Փի Սի Ար» թեստերը, ինչը մեր երկրի ոսկյա չափանիշն է,- հայտարարեց էկատերինե Տիկարաձեն:

Նշենք, որ դեկտեմբերի 3-ից երկու ամսվա ընթացքում, երկրի ամբողջ տարածքում կիրականացվի ինտենսիվ թեստավորման ծրագիր, օրական կկատարվի 20 հազար փորձարկում:

ԱՐԱԳ ԹԵՍՏԵՐ՝ ՎԱՐԱԿՎԱԾՆԵՐԻՆ ՎԱՂ ՓՈՒԼՈՒՄ ԲԱՑԱՀԱՅՏԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ

Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի ղեկավար Ամիրան Գամղրելիձեի հայտարարությամբ, սահմանափակումների ժամանակահատվածում զգալիորեն ընդլայնելու է երկրում հակագենի վրա հիմնված արագ թեստերի միջոցով վարակվածների վաղ փուլում հայտնաբերումն ու նույնականացումը:

- Ինչպես գիտեք, հատկապես կարեւոր է, սահմանափակումների ժամանակահատվածում ընդլայնել թեստավորման մատչելիությունը վարակի վաղ հայտնաբերման նպատակով: Այսպիսով, ինչպես գիտեք, վերջին մեկուկես ամսվա ընթացքում, շուրջ երկու ամսում, այդ նոր գեներացիայի հակագենի վրա հիմնված թեստերը, եթե ճիշտ են վերցված, տալիս են նույն արդյունքը, ինչը ոսկյա չափանիշը՝ «Փի Սի Ար» թեստը: Ուստի, կա հանձնարարական, որ դրանք հնարավորինս օգտագործվեն: Երկու ամսվա ընթացքում, կառավարության կողմից մշակված սահմանափակումների ծրագրի ընթացքում, զգալիորեն ընդլայնելու է երկրում հակագենի վրա հիմնված արագ թեստերի միջոցով վարակվածների վաղ փուլում հայտնաբերումն ու նույնականացումը: Համակարգող խորհրդում ընդունվել է որոշում ու համապատասխան բանաձեւ, ինչպես նաեւ արձակվել է նախարարի հրամանը: Օրինակ՝ եթե առավոտյան մենք ունենք 10 234 «Փի Սի Ար» թեստ եւ հակագենի վրա հիմնված շուրջ 3700 թեստ, դա պետք է կրկնապատկել՝ դարձնելով 20 000-25 000: Մենք երկրում պետք է կատարենք 10, 11, 12 000 «Փի Սի Ար» թեստ եւ նույն քանակությամբ արագ թեստ,- ասել է Գամղրելիձեն:

ԱՌԱՆՑ ՊՇՌ ԹԵՍՏԻ՝ ԿԱՐԱՆՏԻՆ ՉԵՆ ԱՆՑՆԻ

Համաձայն Վրաստանի կառավարության Միջգերատեսչական խորհրդի դեկտեմբերի 3-ի որոշման, փոփոխություններ են մտցվել Վրաստանի քաղաքացիների հայրենիք վերադառնալու կանոնակարգում: Այդպիսով, այն քաղաքացիները, ովքեր երկիր են վերադառնում եւ իրենց հետ չունեն ՊՇՌ (պոլիմերազային շղթայական ռեակցիա) թեստի բացասական պատասխան (ամենաուշը՝ 72 ժամ առաջ), նրանց կարանտինային գոտիներ չեն տեղափոխի, փոխարենը կթույլատրեն 12 օր ինքնամեկուսանալ տանը:

Իսկ այն քաղաքացիները, որոնք երկիր են վերադառնում ՊՇՌ թեստի բացասական պատասխանով, որը կատարվել է վերջին 72 ժամվա ընթացքում, նույնպես պետք է ինքնամեկուսանան, բայց՝ 8 օրով:

Այն քաղաքացիները, ովքեր ինքնամեկուսացման հնարավորություն չունեն, նրանց կտեղավորեն կարանտինային հյուրանոցներում:

ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿՍՏԱՆԱՆ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎՈՎ

Հաշվի առնելով երկրում համավարակային իրավիճակը՝ հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության պետական նախարարի գրասենյակի կողմից սկսվել է տեղեկատվական արշավ՝ ազգային փոքրամասնությունների մայրենի լեզվով կորոնավիրուսի մասին կարեւոր տեղեկատվության հասանելիությունը դյուրացնելու նպատակով: Տեղեկատվական արշավը կիրականացվի մի քանի փուլով:



«Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներին օպերատիվ տեղեկացնելու նպատակով, պետնախարարի ապարատի նախաձեռնությամբ, պատրաստվել եւ տարածվել են տեղեկատվական բրոշյուրներ էթնիկ փոքրամասնությունների համար՝ իրենց մայրենի լեզուներով, սահմանված կանոնակարգերի եւ կորոնավիրուսի հետ կապված հաճախակի տրվող հարցերի վերաբերյալ:

Մինչեւ 100 000 բրոշյուր կբաժանվի Քվեմո-Քարթլիի, Սամցխե-Ջավախեթիի եւ Կախեթիի ազգային փոքրամասնություններով հոծաբնակ գյուղերում, մունիցիպալ կենտրոններից հեռու այն գյուղերում, որտեղ առկա է էլեկտրոնային ալիքներով տեղեկատվության հասանելիության հարցը:

Տեղեկատվական նյութերի տարածումը կապահովեն տեղի ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները՝ դռնեդուռ սկզբունքով:

Պետնախարարի աշխատակազմի ջանքերով, մի խումբ երիտասարդ կամավորներ կստանան հատուկ վերապատրաստում կորոնավիրուսի հետ կապված հարցերի վերաբերյալ: Վերապատրաստումը կիրականացվեն Վրաստանի առողջապահության նախարարության ներգրավվածությամբ: Դասընթացին մասնակիցներին կտրվի տեղեկատվություն այնպիսի հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են՝ կորոնավիրուսի կանխարգելման եւ կառավարման կանոնները, սահմանափակումներն ու կանոնակարգերը, պետական օգնություններն ու արտոնությունները, մեկուսացման եւ կարանտինի կանոններն ու այլ հրատապ հարցեր:

Դասընթացից հետո, ուսուցիչների մի խումբ կամավոր հիմունքներով հեռակա հանդիպումներ կանցկացնի էթնիկ փոքրամասնությունների երիտասարդների հետ եւ կտրամադրի տեղեկատվություն հայերենով եւ ադրբեջաներենով:

Պետական նախարարի աշխատակազմը, Վրաստանի կառավարության աշխատակազմի հետ համագործակցությամբ, հատուկ դասընթաց եւ աշխատանք է տրամադրել մի քանի երիտասարդների կառավարության թեժ գծում՝ 1441, ովքեր կապահովեն քաղաքացիների խորհրդատվություն եւ համապատասխան ծառայություններ, այդ թվում՝ հայերենով եւ ադրբեջաներենով՝ տեղաշարժի սահմանափակման ժամանակ քաղաքացիների անհետաձգելի հանգամանքների դեպքում անցաթուղթ տրամադրելու վերաբերյալ:

Պետնախարարության հայտարարության մեջ ասվում է, որ էթնիկ փոքրամասնությունների իրազեկման արշավն իրականացվում Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ (USAID), Վրաստանի ՄԱԿ-ի ասոցիացիայի (UNAG) «Հանդուրժողականություն, քաղաքացիական իրազեկման եւ ինտեգրման աջակցության ծրագրի» (PITA) շրջանակներում:

Էջը պատրաստեց ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍ. ԱՃԽԱՐՀՈՒՄ ՎԱՐԱԿՎԱԾՆԵՐԻ ԹԻՎԸ ԳԵՐԱԶԱՆՑԵՑ 65 ՄԻԼԻՈՆԻ ՇԵՄԸ

COVID-19-ի հաստատված դեպքերի թիվն աշխարհում անցել է 65 600 միլիոնից: Կորոնավիրուսի հետազոտական կենտրոնների տվյալների համաձայն, մահացածների թիվը գերազանցել է 1 513 129 հազարը: Ապաքինվել է 45 միլիոն 431 944 մարդ:

Վարակվածների թվով աշխարհում առաջին տեղում է **ԱՄՆ**-ը, որտեղ կա հաստատված **14 535 196** դեպք: Այստեղ մահացածների թիվը **282 829** է: Երկրորդ տեղում **Հնդկաստանն** է, որտեղ հաստատված դեպքերի թիվը հասել է **9 571 780**-ի, մահացածներինը՝ **139 227**-ի:

Վարակվածների թվով հաջորդ տեղում **Բրազիլիան** է, որտեղ վարակվել է **6 487 516**, մահացել՝ **175 307** մարդ: **Ռուսաստանում** կորոնավիրուսով վարակվել է **2 402 949**, վարակի հետեւանքով մահացել՝ **42 176** մարդ: Ռուսաստանին հաջորդում են Ֆրանսիան, Իսպանիան, Մեծ Բրիտանիան, Իտալիան, Արգենտինան եւ Կոլումբիան:

Հայաստանում, ընդհանուր առմամբ, վարակվածների թիվը հասնում է **139 692**-ի, մահացածներինը՝ **2 277**-ի, ապաքինվածներինը՝ **114 990**-ի:

Ադրբեջանում վարակվածների թիվը կազմում է **133 733** մարդ: Վարակից մահացել է **1 510,** ապաքինվել՝ **81 234** մարդ:

Վերջին տվյալներով, **Վրաստանում** վարակվել է **152 704,** մահացել՝ **1 425,** ապաքինվել՝ **126 904** մարդ:

*Դեկտեմբերի 4-ին կորոնավիրուսով վարակման 5 068 նոր դեպքերից **1 959-ը Թբիլիսիում է, Աջարիայում՝ 483-ը, Իմերեթիում՝ 980-ը, Քվեմո Քարթլիում՝ 296-ը, Շիդա Քարթլիում՝ 222-ը, Սամեգրելո-Զեմո Սվանեթիում՝ 408-ը, Կախեթիում՝ 335-ը, Գուրիայում՝ 122-ը, Մցխեթա-Մթիանեթիում՝ 130-ը, Ռաճա-Լեչխումիում եւ Քվեմո Սվանեթիում՝ 19, Սամցխե-Ջավախեթիում՝ 114-ը:***

Նշենք, որ, ներկայիս տվյալներով, Վրաստանում կորոնավիրուսով վարակվածների ընդհանուր թիվը գերազանցում է Հայաստանում վարակվածների ընդհանուր թվին:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԻՆ ՀԱՄԱՎԱՐԱԿՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ ՊԱՀՊԱՆՎՈՒՄ ԵՆ

Հայաստանի սահմանին մուտքի եւ ելքի հատուկ ռեժիմի սահմանափակումների վերացումը վերաբերում է բացառապես ռազմական դրության պայմանների փոփոխությանը: Իսկ համավարակով պայմանավորված սահմանափակումները շարունակում են ուժի մեջ մնալ, որոնք սահմանված են Հայաստանի կառավարության որոշմամբ:

Մասնավորապես, Հայաստանի կառավարության 2020թ. դեկտեմբերի 2-ի որոշմամբ վերացվել է 2020թ. սեպտեմբերի 27-ից հայտարարված ռազմական դրության ժամանակահատվածում Հայաստան մուտքի եւ ելքի հատուկ ռեժիմի սահմանափակումը:

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը, ոստիկանությունը, պաշտպանության նախարարությունը, արտակարգ իրավիճակների նախարարությունը կարող են անձանց արգելել Հայաստան մուտք գործել (բացառությամբ՝ ՀՀ քաղաքացիների) եւ դուրս գալ՝ պայմանավորված պետական անվտանգության, մարդկանց կյանքի եւ անվտանգության ապահովման անհրաժեշտությամբ:

Միաժամանակ, շարունակում է գործել կարանտինի ընթացքում կիրառվող սահմանափակումների մասին կառավարության որոշումը: Հայաստանի ողջ տարածքում կարանտինը սահմանված է 2020 թվականի սեպտեմբերի 11-ի ժամը 17:00-ից մինչեւ 2021 թվականի հունվարի 11-ը ներառյալ:

Ըստ այդմ, ցամաքային սահմանի անցակետերով արգելվում է ՀՀ քաղաքացիություն չունեցող անձանց մուտքը Հայաստան, բացառությամբ՝ ՀՀ քաղաքացիների ընտանիքի անդամների եւ ՀՀ-ում օրինական հիմքերով բնակվելու իրավունք ունեցող անձանց, դիվանագիտական ներկայացուցչությունների, հյուպատոսական հիմնարկների ու միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների եւ նրանց ընտանիքի անդամների, հոգեհանգստի կամ թաղման արարողությանը մասնակցելու նպատակով մուտք գործող անձանց, եթե նրանք հանգուցյալի մերձավոր ազգականներն են (ծնողը, ամուսինը, երեխան, քույրը, եղբայրը), միջպետական բեռնափոխադրումներ իրականացնող վարորդների, բեռնատար գնացքների շարժակազմի մեքենավարների (այդ թվում՝ նրանք, ովքեր բեռնատար ավտոմեքենաների, գնացքների շարժակազմերի բեռնաթափումից հետո լքում են Հայաստանի տարածքը): Նաեւ այն անձանց, երբ սահմանապահ զորքերի հրամանատարը, հաշվի առնելով մուտքի հրատապությունն ու անհրաժեշտությունը, ինչպես նաեւ այդ երկրներում (տարածքներում) համավարակային իրավիճակը, թույլատրում է մուտք գործել Հայաստանի տարածք:

ՆՎԱԶԵԼ Է ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹԻՎԸ

Հայաստանի մշտական բնակչության թվի ցուցանիշը 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմել է 2 959,7 հազ. մարդ եւ, 2019 թվականի տարեսկզբի համեմատ, նվազել 5,6 հազ. մարդով կամ 0,2 տոկոսով:

Հայաստանի մշտական բնակչության կազմում 2020 թվականի տարեսկզբի դրությամբ, քաղաքային եւ գյուղական բնակչության մասնաբաժինները կազմել են, համապատասխանաբար՝ 63,9 եւ 36,1 տոկոս: Հայաստանի մշտական բնակչության 47,2 տոկոսը կազմել են տղամարդիկ, իսկ 52,8 տոկոսը՝ կանայք: 2020 թվականի տարեսկզբի դրությամբ, բնակչության միջին տարիքը կազմել է 36,9 տարի, իսկ տղամարդկանց եւ կանանց տարիքը, համապատասխանաբար՝ 34,8 եւ 38,8 տարի:

2020թ. տարեսկզբի դրությամբ, Հայաստանի մշտական բնակչության թվի 63,8 տոկոսը կազմել է աշխատունակ բնակչությունը (16-62 տարեկան), 21,5 տոկոսը՝ աշխատունակ տարիքից ցածր (0-15 տարեկան), իսկ 14,7 տոկոսը՝ աշխատունակ տարիքից բարձր (63 եւ ավելի տարեկան) բնակչությունը:

Հայաստանի 1 000 աշխատունակ տարիքի բնակչությանը բաժին է ընկել անաշխատունակ տարիքի 566 մարդ (230 տարեց եւ 336՝ 0-15 տարեկան երեխա):

Պտղաբերության (ծնելիության գումարային) գործակիցը՝ ծնունակ տարիքի (15-49 տարեկան) մեկ կնոջ հաշվով 2019թ. կազմել է 1.599 միավոր, 2018թ.՝ 1.572 միավորի համեմատ, ինչը զգալիորեն ցածր է բնակչության պարզ վերարտադրության համար անհրաժեշտ՝ 2.150 ցուցանիշից:

«ՈՍԿԵ ԾԻՐԱՆԸ» ՀԱՏԵՑ ԵԶՐԱԳԻՇԸ

«Ոսկե ծիրան» 17-րդ միջազգային կինոփառատոնը հատեց եզրագիծը: Նոյեմբերի 1-ից «Նվիրում Արցախին» նախագծով փառատոնը միացել էր «Հայաստան» համահայկական հիմնադրամի «Մենք ենք, մեր սահմանները» համազգային դրամահավաքին, եւ մինչեւ նոյեմբերի 30-ը, տարբեր ծրագրերի շարունակական իրականացմամբ, իր ներդրումն ունեցավ համազգային դրամահավաքի ընթացքում:

Նշենք, որ «Ոսկե ծիրան» կինոփառատոնի «Նվիրում Արցախին» նախագծի մեկնարկը տրվեց նոյեմբերի 1-ին Կաննի կինոփառատոնում ընդգրկված եւ Արցախին նվիրված Նորա Մարտիրոսյանի «Երբ որ քամին հանդարտվի» ֆիլմի համահայկական պրեմիերայով: Հաջորդիվ ներկայացվեցին արցախյան թեմատիկայով այլ կինոնկարներ: «Ոսկե ծիրան»-ը «Հայաստան» համահայկական հիմնադրամի դրամահավաքին փոխանցեց 3 524 000 ՀՀ դրամ:

Փառատոնի շրջանակներում, կազմակերպվեցին նաեւ առցանց վարպետության դասեր: Ծրագրված էին նաեւ այլ միջոցառումներ, մասնավորապես, Ազնավուրի հրապարակի աստղային պուրակում բացվելու էին ռեժիսորներ Ռուբեն Գեւորգյանցի, Ռոբերտ Սահակյանցի, Գրիգոր Մելիք-Ավագյանի, Առնոլդ Աղաբաբովի աստղերը, սակայն ելնելով ներկա իրավիճակից, որոշում ընդունվեց այն անցկացնել ավելի ուշ:

Քանի որ փառատոնի միջազգային մրցույթի ժյուրին աշխատում էր հեռահար, ապա որոշակի բարդություններ էին առկա քննարկումները կազմակերպելու հարցում, եւ այդ իսկ պատճառով մրցույթի արդյունքները փառատոնը կհրապարակի ավելի ուշ:

ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ՝ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԱՆԿԱՐԳՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ ՀԻՆԳ ՏԱՍՆՅԱԿ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Հայաստանի ազգային անվտանգության ծառայությունը (ԱԱԾ) հայտնում է, որ զանգվածային անկարգությունների, իշխանությունը զավթելուն, սահմանադրական կարգը բռնի տապալելուն ուղղված հրապարակային կոչերի դեպքերի առթիվ հարուցված քրեական գործի շրջանակներում, քրեական հետապնդում է հարուցվել շուրջ 5 տասնյակ անձի նկատմամբ, որից 18 անձի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել կալանավորումը, իսկ մնացած անձանց նկատմամբ ընտրվել են անազատության հետ չկապված խափանման միջոցներ:

Ընդ որում, նախաքննական մարմնի կողմից ձեռնարկված արդյունավետ քննչական եւ այլ դատավարական գործողությունների, ինչպես նաեւ դրանց զուգահեռ իրականացված օպերատիվ-հետախուզական համալիր միջոցառումների արդյունքում պարզաբանվել են նաեւ շուրջ 250-ից ավելի անձանց ինքնությունները, ինչպես նաեւ ճշտվել են զանգվածային անկարգության այլ մասնակիցների տվյալները, որոնց հայտնաբերման ուղղությամբ իրականացվում են որոնողական, փնտրողական աշխատանքներ:

Մասնավորապես, քննությամբ պարզվել է, որ զանգվածային անկարգություններին մասնակից անձանց մեջ մեծ թիվ են կազմել Հայաստանի երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի կողմնակիցները, «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցության անդամ հանդիսացող անձինք, «Կամք» նախաձեռնության, «Այլընտրանք» հասարակական կազմակերպության անդամները, «Հայաստանի Հանրապետական կուսակցության» աջակիցները, «Հայաստանի Հանրապետական կուսակցության» նախկին պատգամավորների օգնականները, համակիրները, հանրային հնչեղություն ստացած տարբեր քրեական գործերով ամբաստանյալներ, որոնց նկատմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով կիրառվել են դատավարական հարկադրանքի միջոցներ եւ հարուցվել քրեական հետապնդումներ:

ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ ԿՎԵՐԱՑՎԵՆ

Հայաստանի կառավարությունը վերացնում է երկրում հայտարարված ռազմական դրության շրջանակներում կիրառված հավաքների եւ գործադուլների կազմակերպման, անցկացման եւ դրանց մասնակցելու արգելքը, Հայաստանի տարածք մուտքի եւ ելքի հատուկ ռեժիմը եւ հրապարակումների, հաղորդումների իրականացման սահմանափակումներն ամբողջությամբ:

ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԹԵԿՆԱԾՈՒՆ ՎԱԶԳԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆՆ Է

Դեկտեմբերի 3-ին Հայաստանում ընդդիմադիր ուժերը ներկայացրեին իրենց միասնական թեկնածուին: Խորհրդարանական եւ արտախորհրդարանական 17 կուսակցություններից բաղկացած «Հայրենիքի փրկության խորհուրդ»-ի վարչապետի միասնական թեկնածուն Վազգեն Մանուկյանն է: Վազգեն Մանուկյանը նախկինում զբաղեցրել է Հայաստանի վարչապետի, Պաշտպանության նախարարի եւ Հանրային խորհրդի նախագահի պաշտոնները: Խորհրդարանական եւ արտախորհրդարանական ընդդիմադիր 17 կուսակցություններ նոյեմբերի 11-ից տարբեր ակցիաներ են իրականացնում՝ պահանջելով ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հրաժարականը:

27 ՀԱԶԱՐ ԱՐՑԱԽՑԻ ՎԵՐԱԴԱՐՁԵԼ Է ԱՐՑԱԽ

Լեռնային Ղարաբաղում առաքելություն իրականացնող ռուս խաղաղապահների ուղեկցությամբ, միայն դեկտեմբերի 2-ին Արցախ է վերադարձել եւս 1168 արցախցի: Ընդհանուր առմամբ, Արցախ վերադարձած քաղաքացիների ընդհանուր թիվն արդեն ավելի քան 27 հազար է:

«Ստեփանակերտի 8-րդ դպրոցում այսօր վերսկսվել է նաեւ ուսումնական գործընթացը: Ուսումնառությունը սկսել է ավելի քան 400 աշակերտ: Դպրոցը վերականգնվել է ռուս խաղաղապահների օգնությամբ»,- ասված է ՌԴ ՊՆ կայքում:

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-ԻՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԴՊՐՈՑՆԵՐԸ ԿԱՆՑՆԵՆ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ

Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը շրջաբերական գրությամբ դիմել է մարզպետարաններին եւ Երեւանի քաղաքապետարանին դեկտեմբերի 7-ից Հայաստանի հանրակրթական ուսումնական հաստատությունների 5-12-րդ դասարանների սովորողների դասերն առկա կազմակերպելու վերաբերյալ:

Համաձայն մինչ այդ տրված կարգավորման, առկա է կազմակերպվում 1-4-րդ դասարանների, ինչպես նաեւ ներհամայնքային տրանսպորտ չունեցող համայնքների բոլոր դասարանների ուսումնական գործընթացը: Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ծանր զարգացման բարձր ռիսկի խմբի, 65 եւ բարձր տարիքի աշխատողները կարող են աշխատանքն իրականացնել «հեռավար» եղանակով իրենց գրավոր համաձայնությամբ: Ռիսկի խմբում գտնվող երեխաները կշարունակեն հեռավար ուսուցումը՝ կենտրոնացված հեռավար ուսուցման միջոցով: Յուրաքանչյուր դպրոցի համար կկիրառվի առանձին մոտեցում՝ կախված դպրոցում համավարակի դեպքերի թվից. 10 տոկոսից ավելի վարակվածության ցուցանիշ ունենալու դեպքում, ըստ սահմանված առողջապահական կանոնների, դպրոցը կրկին կանցնի հեռավար ուսուցման:

ԵՐԳ՝ ՆՎԻՐՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԶՈՀՎԱԾ ԵԶԴԻՆԵՐԻՆ

Գերմանաբնակ եզդի երգիչ Իբրահիմ Խալիլը նոր երգ է ֆայնագրել, որը նվիրել է Արցախյան պատերազմում զոհված եզդի տղաների հիշատակին՝ «Մենք չենք մահանա» երգն արդեն համայանցում է:

«Նրանց գործն անմահ է: Փառք ու պատիվ ֆեզ»,- սոցցանցում նշել է երգիչը:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԴԵԿՏԵՄԲԵՐ

6.12.2020 Բարեկենդան Սուրբ Հակոբի պահքի

Բարեկենդան Սուրբ Հակոբի պահքի տոնը նշվում է դեկտեմբեր ամսվա առաջին կիրակիներից մեկի ժամանակ: Բարեկենդան (բառացի՝ բարի կենդանություն, ուրախություն), գլխավոր շաբաթապասերին նախորդող շաբաթ օրը:

9.12.2020 Հղություն Սուրբ Աստվածածնի

Հղություն Սուրբ Աստվածածնի, Աստվածածնի մոր՝ Աննայի հղության հիշատակության տոնն է. բոլոր Արեւելյան եկեղեցիները նշում են դեկտեմբերի 9-ին, իսկ Կաթոլիկ եկեղեցին՝ դեկտեմբերի 8-ին:

ՄԱՆԿԱԿԱՆ ԵՎՐԱՏԵՍԻԼ - 2020

ՄՐՑՈՒՅԹՈՒՄ ՍԱՆԴՐԱ ԳԱԴԵԼԻԱՆ 6-ՐԴՆ ԷՐ

Նոյեմբերի 29-ին հեռավար կարգով անցկացվեց «Մանկական Եվրատեսիլ-2020» միջազգային մրցույթը, որտեղ 12 մասնակից երկրների ներկայացուցիչների թվում Վրաստանը ներկայացնող Սանդրա Գադելիանին՝ Գիգա Կուխիանիձեի մրցութային «Դու մենակ չես» (You are not alone) երգով, զբաղեցրեց 6-րդ տեղը:

Իսկ երգի փառատոնի հաղթող դարձավ Ֆրանսիայի ներկայացուցիչ Վալենտինան (Valentina)՝ J'imagine երգով:

ՍՊՈՐՏ

ՖՈՒՏԲՈԼԻ ԵՎՐՈՊԱՅԻ ՄԻՆՉԵՎ 21 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

ՈՒԵՖԱ-ի որոշմամբ, 2023 թվականի Եվրոպայի մինչեւ 21 տարեկանների 24-րդ առաջնությունը կանցկացվի երկու երկրներում՝ Վրաստանում ու Ռումինիայում:

16 եվրոպական թիմեր կբաժանվեն չորս խմբի: Յուրաքանչյուր երկիր կհյուրընկալի երկու խումբ: Ըստ առաջնության կանոնակարգի, երկու հյուրընկալող երկրներ՝ Վրաստանը եւ Ռումինիան, խաղալու են եզրափակիչ փուլում՝ առանց որակավորման փուլ անցնելու:

«Եվրո 2023»-ի պատանեկան թիմերի եզրափակիչ հանդիպումը կանցկացվի Բաթումիի մարզադաշտում, իսկ բացման հանդիպումը՝ Ռումինիայում: Խմբային հանդիպումները կանցկացվեն 4 մարզադաշտում, այդ թվում՝ Բաթումիում, Փոթիում եւ Թբիլիսիում («Բորիս Պայճաձեի - Դինամո Արենա» եւ «Միխեիլ Մեսխի» մարզադաշտեր):

ԵՎՐԱԲԱՍԿԵՏ 2020. ՎՐԱՍՏԱՆԸ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՓՈՒԼՈՒՄ

Եվրաբասկետ 2022-ի ընտրական փուլում Վրաստանի հավաքականը երկու հանդիպում է անցկացրել Ֆինլանդիայում եւ երկուսում էլ հասավ հաղթանակի՝ պարտության մատնելով Ֆինլանդիայի եւ Շվեյցարիայի հավաքականներին ու մասնակցության ուղեգիր նվաճելով առաջնության եզրափակիչ փուլին:

Նշենք, որ Եվրոպայի առաջնությունը կանցկացվի չորս երկրում՝ Վրաստանում, Գերմանիայում, Չեխիայում եւ Իտալիայում:

Ընդհանուր առմամբ, Եվրոպայի առաջնությանը մասնակցելու են 24 թիմեր, որոնցից 11-ն արդեն հայտնի են: Եվրաբասկետի ուղեգիր նվաճած եւս 13 թիմ հայտնի կդառնա փետրվարին:

ՀԻՇԱՏԱԿԻ ԽՈՍՔ

ԻՍԿԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՆ ՈՒ ԱԶՆԻՎ ՄԱՐԴԸ

Ծանր է անցյալով խոսել այնպիսի ազնվագույն մարդու եւ իսկական ուսուցչի մասին, ինչպիսին Ասյա Սարգսյան-Բաղդասարյանն էր, ով իր մահկանացուն կնքեց կյանքի 79-րդ տարում:

Մի առիթով ուսուցչուհին նշել է. «Թերեւս աշխատանքը լարում է պահանջում, բայց ներքին բավարարվածությունը, որ գալիս է ցանկալի արդյունքից հետո, կարծում եմ, ուսուցչի գերագույն վարձատրությունն է»: Սիրված ու նվիրված մանկավարժը մեր ծանր ու հեղհեղուկ օրերում անմնացորդ նվիրվեց իր սաներին ու երկրին: Տիկին Ասյան աշխատանքի հանդեպ անմնացորդ նվիրումի ու մարդկային բարձր արժանիքների շնորհիվ վայելում էր աշակերտների, գործընկերների անսպառ սերն ու հարգանքը: Գնահատվել է Վրաստանի կրթության ու գիտության նախարարության կողմից՝ արժանանալով «Աշխատանքի վետերան», «Ժողովրդական կրթության գերազանցիկ» կրծքանշանների, Հայաստանի Հանրապետության ԿԳ նախարարության՝ «Ոսկե հուշամեդալի», բազմաթիվ պատվոգրերի, շնորհակալագրերի:

Ասյա Գաբրիելի Սարգսյան-Բաղդասարյանը ծնվել է 1941 թվականին Թբիլիսիում, ավարտել է Հավլաբար թաղամասում գտնվող թիվ 93 հայկական միջնակարգ դպրոցը, ապա Ա.Պուշկինի (այժմ՝ Իլիայի անվան համալսարան) անվան մանկավարժական ինստիտուտը: 3 տարի աշխատել է Բոգդանովկայի (այժմ՝ Նինոծմինդայի մունիցիպալիտետ) շրջանի Հեշտիա գյուղի դպրոցում, իսկ 1965-2015 թվականներին՝ մայրաքաղաքի թիվ 104 կրթօջախում:

Տիկին Ասյան ոչ միայն լուսավոր անուն էր Վրաստանի կրթության համակարգում, այլեւ հրաշալի մայր, ամուսին ու տատ: Կյանքի ընկերոջ՝ կրթության ոլորտի երախտավոր Նորայր Բաղդասարյանի հետ, դաստիարակել է երեք հրաշալի զավակների՝ Ալինան եւ Սուսաննան մանկավարժներ են, իսկ որդին՝ Արթուրը, ճարտարապետ է:

Ու այսօր մեզ հասած տիկին Ասյայի հանկարծամահ բոթը խորը ցավ ու ափսոսանք առաջացրեց բոլոր նրանց սրտերում, ովքեր որեւէ առիթով շփվել կամ ճանաչում էին այդ իսկական Մարդուն, ով ուսանելի օրինակ է եղել իր սաների, կրտսեր գործընկերների համար:

Սրտակից բարեկամ, կարեկցող ու արդարամիտ, ճշմարտախոս ու ազնվաբարո, ահա այսպիսին կմնա նա իրեն ճանաչողների սրտերում ու հիշողության մեջ:

ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Թբիլիսիի թիվ 104 հանրային դպրոցի մանկավարժները, աշակերտներն ու ծնողները վշտակցում են դպրոցի նախկին ուսուցիչ Նորայր Բաղդասարյանին՝ սիրելի կնոջ՝ վաստակաշատ մանկավարժ, դպրոցի նախկին ուսուցչուհի

Ասյա Գաբրիելի ՍԱՐԳՍՅԱՆ-ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ

մահվան կապակցությամբ եւ ցավակցում են հանգուցյալի հարազատներին եւ մերձավորներին:

«Վրաստան» թերթի խմբագրությունը, Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետհայդրամայի թատրոնը, Վրաստանի հայերի միությունը, Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միությունը ցավակցում են թերթի նախկին աշխատակից Ալինա Բաղդասարյանին եւ Վրաստանի կրթության նախարարության Ազգային ծրագրերի փոխկապակցման դեպարտամենտի նախկին պետ Նորայր Բաղդասարյանին՝ սիրելի մոր եւ կնոջ՝

Ասյա Գաբրիելի ՍԱՐԳՍՅԱՆ-ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ

մահվան կապակցությամբ ու զորակցում են հանգուցյալի մերձավորներին ու բարեկամներին:



ԽԱՉԲԱՌ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Վանքային համալիր Արցախում: 5.«Երկինք Թ դարու» պատմավեպի հեղինակը: 10.Ասիական պետություն: 11.Բուստ, մարջան: 12.«... էր, ... էր մկստան» («Մկների ժողովը»): 13.Վառ կարմիրը: 15.Բայի վերջավորություն: 17.Լեռ Արցախում: 20.Լեոնարդո դա Վինչիի կտավներից «... Լիզա»: 22.Գերմանացի փոփ երգչուհի ... Անն Լաուեր: 24.Հայկական ամսանուն: 25.Հովհ.Թումանյանի պոեմներից: 26.Անձնական դերանուն: 28.Լիճ Պատմական Հայաստանում: 29.Մոմի հումքը: 30.Թաս, կաթսա: 34....ֆաբրիկատ, ...հում: 33.Ոչ սառը, ջերմ: 34.Անհուսալի, հեծեծալի: 35.Հիվանդ, անառողջ: 37.Հայ մեծ բանաստեղծ: 39.Յոթերորդ նոտան: 40.Գերազան..., հպան..., թափան...: 41.Ֆրանսիացի գեղանկարիչ: 43.Հայրը՝ Գիքորի լեզվով: 46.Փլավացու բույս: 47.Ժողովրդական երգչուհի ... Մարտիրոսյան: 50....ը գալ, չուզենալ: 51.Մաքրել, մաղել, ջոկել: 52.Գործ, վերաբերմունք: 53.Մաթեմատիկական տառ: 54.Ստորադասական շաղկապ: 56.Լեռ Վանա լճի մոտ: 57.«Ինչո՞ւ է աղմկում գետը» ֆիլմի գլխավոր հերոսը:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Վրաց պոետ Տերենտի ...: 2.Աշխարհի ամենաերկար գետը: 3.Թբիլիսահայ գրող Ա.Գեւորգյանի «Լինենք ... ու բարի» ժողովածուն: 4.Խորհրդային պիոներական ճամբար Ղրիմում: 8.Միանիշ թիվ: 7.Դրամական միավոր Եվրոպայում: 8.«Լուսնյակը ..., գնաց» (ժող. երգ): 9.Անխոս, առանց բառերի: 14.Քաղաք ԱՄՆ-ի Նեւադա նահանգում ... Վեգաս: 15.«Մայրիկ» ֆիլմի ռեժիսոր ... Վեռնոյ: 16.Նույնիմաստ բառ: 17.Աշխարհի ամենամեծ մարզադաշտը: 18.Ձիու ուտելիք: 19.Առատաձեռն, հյուրընկալ, հյուրասեր: 21.Մայր, մայրիկ (Լոռու բրբ.): 23.Բուժել, լավացնել: 27.Հնագույն պետություն: 28.Վախթանգ Կիկաբիձեն՝ «Միմինո» ֆիլմում: 29.Սննդամթերքի տեսակ: 31.Աֆրիկյան պետություն: 33.Լիբիայի մայրաքաղաքը: 36.Հայկական գաղտնի բանակ: 38.Հոսանքի ուժի չափման միավոր: 42.Լեռ Արեւմտյան Հայաստանում: 44.Պետություն Ասիայում: 45.Անֆիլտր ծխախոտ: 48.Ե'վ Գրիգորյանը, ե'ւ Սաֆարյանը: 49.Գովազդային գործակալություն Թբիլիսիում: 51.Հով, մեղմ քամիով եղանակ: 52.Քանդակագործ ... Շիրազ: 55.Պայմանի շաղկապ:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 4.Ստալին: 8.Սուվորով: 9.Անվանի: 10.Ալարկոտ: 14.Ակնամոմ: 15.Միդի: 17.Բերետ: 18.Ճերմակել: 22.Դարա: 23.Ոդիսեւս: 26.Կիսո: 27.Փոխանակում: 32.Սթիվի: 33.Աջիկա: 35.Լոկ: 36.Դարպասապահ: 41.Առակ: 42.Լիֆ: 44.Հաստատ: 45.Կարինե: 46.Ավան: 47.Լուս: 48.Անմայր: 49.Սադիստ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Դուկլա: 2.Կոտրն: 3.Սոդոմ: 5.Տանձ: 6.Լրագիր: 7.Նաիրիտ: 11.Ակորդ: 12.Կապար: 13.Տոլե: 15.Մեկիկ: 16.Դեռեւս: 18.Ճամփորդ: 19.Մախաթ: 20.Կաքավ: 21.Լոռու: 24.Սիպիլ: 25.Սոխակ: 28.Խսիր: 29.Նիկա: 30.Կիթառ: 31.Մարականա: 34.Կոսինուս: 37.Ատամն: 38.Պիտնա: 39.Սատար: 40.Պակաս: 42.Լիլի: 43.Ֆեստ:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ՀՅՈԵՈ ՄՈՆԱՅԱՐՏՈ: ԹԲԻԼԻՍԻ 0105, Գ.ԱԲՈՆԵԼԻՆ ՀՈՒՐԱ 5.
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աբոնելի փ. 5
ՏԵԼ. ՀԵՌ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ՎՐԱՍՏԱՆՈ» ԹԲԻԼԻՍԻ, ՍԱՀԱՐՈՎՅԵԼՈՎ
"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445